

դակաթ սիրով կը համբուրէր եւ կ'արտասուէր իբր Քրիստոսը տեսնելով. Աստուծոյ խնդրելով խաղաղութիւն եւ բոլոր եկեղեցիին հաստատութիւնը՝ զանոնք կը դնէր իր մատանիովը կնքուած ոսկի տուփի մը մէջ եւ կը յանձնէր քահանաներուն որ կը պահէին սուրբ Առաքեալք կոչուած եկեղեցին, ուր մինչեւ այսօր մեծ պատուով կը յարգուին» (Ձ. Թ. 1032):

5. — Նարկիսոսի հրաւեր (Գ. Դար). — Եւսեբիոս պատմիչը կը գրէ (Ե. կ. պ. Ձ. էջ 438-39), «Երուսաղիմի եկեղեցիին հաւատացեալները աւանդաբար կը յիշատակեն Նարկիսոս հայրապետի (106-222) կողմէ կատարուած հրաշքի մը պատմութիւնը եւ կ'ըսեն. Ձատկի մը ճրագալուցին պակսեցաւ սարկաւազին յատուկ ձէթը, եւ ատոր համար ժողովուրդը մեծապէս տրտմեցաւ, Նարկիսոս կանթեղները պատրաստողներուն հրամայեց մօտակայ ջրհորէն ջուր բերել իրեն. և երբ բերին, ջուրին վրայ աղօթեց, և ջերմեռանդ հաւատքովն՝ զոր ունէր, հրամայեց կանթեղներուն մէջ լեցնել զայն, երբ սպասաւորները Նարկիսոսի այս հրամանը կատարեցին, կանթեղներուն ջուրը ձէթի փոխուեցաւ, եւ այդ իւղէն շատ մը հաւատացեալներու մօտ մինչև մեր ժամանակ պահուած է այն հրաշքին յիշատակի համար». (Տե՛ս նաև Հան. էջ 182):

6. — Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Գերեզմանին այցելութիւնը եւ անոր մատանց տեղը (Գ. Դար). — Ս. Գրիգոր Լուսաւորիչ երբ Սեպուհ լերան վրայ կը ճրջնէր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին երկրպագութեան երթալ փափաքեցաւ. ո՛չ թէ հետիտոն, այլ երես ի քարչ և ծնկաց վրայ: Հրեշտակը տեսաւ և Աստուծոյ